

ԱՄՆ Արեւմտեան թեմէն ներս

ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. եկեղեցին իր Հոգեւոր Հովի՝ Արժ. Տ. Արշակ առաջինի. Խաչապուրեանի գլխաւորութեամբ եւ յարակից կազմակերպութիւններու համագործակցութեամբ, երկար փորձներէ ի վեր օգրակար ծառայութիւն կը մատուցանէ իր Ծովսի հաւաքացեալներուն եւ նիւթական օժանդակութեամբ կը նպաստէ նաեւ Առաջնորդարանի կենսական կարգ մը ծրագիրներու իրագործման:

Գնահատելի է, որ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ ղեկավարութիւնը փարիներ առաջ գաղափարը յղացած է Ծովսի մահացած անդամներուն յիշարակը վառ պահելու նպատակով հիմնադրամ մը ստեղծելու, որ կը կոչուի «Յիշարակութեան Վիմադրամ» (Memorial Fund): Այս հիմնադրամի միջոցաւ օգրակար կը հանդիսանան իրենց Ծովսին, բարենպասակ այլ ծրագիրներու եւ թեմիս Առաջնորդարանին:

Ուրախութեամբ կը յայտնենք, թէ Սուրբ Յակոբ Հայց. եկեղեցւոյ «Յիշարակութեան Վիմադրամ»ը Հոգեւոր Հովիւի նախագահութեամբ իր գումարած ժողովին մէջ որոշելով, 10,000 փութարի նուիրապատութիւն մը կապարեց թեմիս Ամատնային Ճամբարին եւ 5,000 փութարի նուիրապատութիւն մըն ալ Առաջնորդարանին, որու շնորհիւ բարերարը պիտի հանդիսանան Բրշ. Յակոբ սրկ. Ներսոյեանի Անգլերէնով հեղինակած "The Faith of the Armenian Church-Student's Manual" օգրակար եւ պահանջքը զգացուած գիրքին:

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿՐԷԿՐԻ ԶՐԳՈՅԵԱՆ 15,000 ՏՈՒԱՐ ԿԸ ՆՈՒՐԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Ինչպէս թեմիս հոգեւորականները, կազմակերպութիւնները եւ հաւաքացեալները փեղեակ են, Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրպրեանի առաջնորդ ընտրութենէն ետք, Առաջնորդարանի կողմէ հրապարակութիւնները նոր թափ մը սրացան: Մէկ փարուան մէջ արդէն իսկ բաւական թիւով գիրքեր եւ գրքոյկներ փառած են: Ծրագրած ենք նոյնպէս նոր հրապարակութիւններ կապարել այս փարուան ընթացքին: Արդէն իսկ նախապատրաստական աշխատանքներ կը փարուին այս ուղղութեամբ եւ նուիրապատներ իրենց հովանաւորութիւնը կը յայտնեն մեզի:

Ուրախ ենք հաղորդելու, թէ Օգլընքի Սուրբ Վարդան Հայց. եկեղեցւոյ երկարամեայ նուիրեալ հաւաքացեալներէն Տէր եւ Տիկին Կրէկ եւ Սեդա Զրքոյեան, 15,000 Տոլարի նուիրապատութիւն մը կապարեցին Արեւմտեան թեմի Առաջնորդարանին ի նպաստ Բրշ. Յակոբ սրկ. Ներսոյեանի "The Faith of the Armenian Church-Teacher's Manual" գիրքի հրապարակութեան:

Ի սրբի: կը գնահատենք Տէր եւ Տիկին Կրէկորի եւ Սեդա Զրթոյեաններուն սրտաբաշխ այս նուիրաբնութիւնը, որու միջոցաւ կարելի պիտի դառնայ առաջնորդ Սրբազան Հօր կողմէ: որոշուած գիրքի մը հրապարակութիւնը: Կը յուսանք այս նուիրաբնութիւնը պատճառ կը դառնայ, որ գրասէր եւ ազգանուէր այլ հաւաքացեալներ եւս իրենց կարողութեան չափով օգտակար հանդիսանան Առաջնորդարանին՝ հովանաւորը եւ կամ բարերարը դառնալով գիրքի մը հրապարակութեան:

ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՒՄԾ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿՈՂՄԷ

Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցոյ Ծուխը եւ իր հաւաքացեալները Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Քահանայ Փեթոյեանի գլխաւորութեամբ, անցնող տարիներու ընթացքին նիւթական մեծ օժանդակութիւն կատարած են Հայաստանի մեր թեմերուն եւ բարեսիրական այլ նպատակներու համար:

Հոգեկան ցնծութեամբ կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել, թէ Արժ. Տ. Սարգիս քինյ. Փեթոյեան, հակառակ անոր որ Ամերիկա ծնած ու մեծցած է, խոր հայրենասէր եւ բարեգործ հոգեւորական մըն է, որ լռելեան կը գործէ եւ շնորհիւ իր հեզահամբոյր բնաւորութեան եւ հաւաքացեալներուն կողմէ: իրեն նկատմամբ ունեցած վստահութեան, անցնող տարիներու ընթացքին ուխտագնացութիւններ կը կազմակերպէ դէպի Մայր Հայրենիք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ այլ սրբավայրեր, ուր հաւաքացեալները իրենց աչքերով կը տեսնեն մեր պապենական թանկագին Հայաստանն ու Սուրբ Էջմիածինը: Անոնք միշտ ալ կ'արժանանան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Օրհնութեան եւ բարձր ուշադրութեան:

Ուրախ ենք հաղորդելու, որ ներկայիս Տէր Հայրը խումբ մը ուխտաւորներով արդէն իսկ Հայաստան կը գտնուի:

Կը փափաքինք յայտնել, թէ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցոյ եւ հաւաքացեալներուն կողմէ հետեւեալ նուիրաբնութիւնները կատարուած են.

2,000 Տոլար՝ ի նպաստ Հայաստանի որբերուն, Երեւանի Արարարեան Հայրապետական թեմի միջոցաւ:

2,000 Տոլար՝ ի նպաստ Սիսիանի Ծուխին, որ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցոյ «Զոյր եկեղեցի»ն է:

5,000 Տոլար՝ ի նպաստ «հապիթաթ»ի, կարօտեալ ընտանիքներու բնակութեան համար:

7,500 Տոլար՝ ի նպաստ Սիւնեաց թեմի մեր որբերուն:

ԴԻԲՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ